

ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված առևտրային վարկերի տարեկան տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման ծրագիր

Ծրագրի նպատակն է նպաստել ԼՂՀ-ում ՓՄՁ սուբյեկտների ֆինանսավորման հետ կապված հիմնախնդիրների հաղթահարմանը և ապահովել ՓՄՁ սուբյեկտների համար ֆինանսական ռեսուրսների մատչելիությունը:

Գործակալ բանկերի կողմից տրամադրվող վարկի պայմանները

	Չափանիշ	Պայման
1.	Վարկի արժույթը	ՀՀ դրամ, արտարժույթ
2.	Վարկի առավելագույն տոկոսադրույքը	տարեկան մինչև 18 %
3.	Վարկի առավելագույն տևողությունը	մինչև 120 ամիս
4.	Այլ պայմաններ	մեկ վարկառուին կարող է տրվել միայն մեկ վարկ

Աջակցությունից չեն կարող օգտվել վարկային, ապահովագրական և ներդրումային կազմակերպությունները, գրավատները, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցները, խաղատների և շահումով խաղերի կազմակերպման գործունեություն իրականացնող սուբյեկտները, ինչպես նաև դուստր և կախյալ տնտեսական ընկերությունները:

Վարկի տարեկան տոկոսադրույքի սուբսիդավորման/այսուհետ՝ Սուբսիդավորում/ ենթակա չափը սահմանվում է Գործակալ բանկի կողմից սեփական միջոցների հաշվին վճարվող 8 տոկոսային կետի տարբերության հաշվարկմամբ, որը հաշվարկվում է վարկի մնացորդի նկատմամբ:

Սուբսիդավորումը իրականացվում է հիմնադրամի միջոցների հաշվին՝ անհատույց վճարումների միջոցով:

Ընթացակարգը

Քայլ 1 Հայտի ընդունումը

Շահառուները հիմնադրամի գրասենյակում Սուբսիդավորում ստանալու համար լրացնում են հայտ: Հայտում նշվում է՝ ՓՄՁ սուբյեկտի անվանումը, գործունեության տեսակը, իրավաբանական հասցեն, գործունեության վայրը, վարկի նպատակը, վարկի գումարը, վարկի մարման ժամկետը, ծրագրի շրջանակներում ստեղծվելիք աշխատատեղերի քանակը:

Հայտին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

- ❖ գործարար-ծրագիր՝ հիմնադրամի կողմից սահմանված պահանջներին համապատասխան,
- ❖ պետական ռեգիստրում գրանցման վկայականի պատճենը, իրավաբանական անձի դեպքում՝ կանոնադրության պատճենը, տնօրենի նշանակման մասին հրամանի պատճենը, տնօրենի կամ անհատ ձեռնարկատիրոջ անձնագրի պատճենը,

- ❖ գործունեության վայրի վկայականի սեփականության կամ վարձակալության վկայականի պատճենը,
- ❖ գրավ դրվող գույքի վկայականի պատճենը,
- ❖ հարկ վճարողի հաշվառման համարի քարտի պատճենը,
- ❖ լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների համար՝ լիցենզիայի պատճենը,
- ❖ շինարարական աշխատանքների իրականացման դեպքում նախագիծ և նախահաշիվ՝ հաստատված մասնագիտացված կազմակերպության կողմից:

Քայլ 2 Հիմնադրամի ֆինանսական կոմիտեի որոշումը

Հիմնադրամի ֆինանսական կոմիտեն ընդունված հայտը քննարկում և կայացնում է որոշում՝ տվյալ գործարար ծրագրի մասով ստացվելիք վարկի տոկոսադրույքի մասնակի Սուբսիդավորմանը համաձայնություն տալու կամ մերժելու մասին:

Քայլ 3 Երաշխավորագրի տրամադրումը

Համաձայնություն ստացած շահառուին տրվում է գրավոր երաշխավորագիր՝ ստացվելիք առևտրային վարկի տարեկան տոկոսադրույքի մասնակի Սուբսիդավորման պատրաստակամության և պայմանների մասին: Հիմնադրամի երաշխավորագիրը և Գործակալի կողմից պահանջվող անհրաժեշտ փաստաթղթերը ստանալու պահից Գործակալը 15 բանկային օրվա ընթացքում կատարում է շահառուի վարկունակության վերլուծություն և կայացնում համապատասխան որոշում՝ վարկ տրամադրելու կամ վարկի տրամադրումը մերժելու մասին: Գործակալը կարող է հրաժարվել ՓՄՁ սուբյեկտին վարկ տրամադրելուց նաև վերջինիս՝ Գործակալի ներքին կարգերով սահմանված պայմանների անհամապատասխանության դեպքում:

Քայլ 4 Պայմանագրի կնքումը

Վարկառուի և Գործակալի միջև կնքվում է վարկային պայմանագիր: Անհրաժեշտության դեպքում՝ հիմնադրամի, Գործակալի և վարկառուի միջև կարող է կնքվել Սուբսիդավորման պայմանագիր (երկկողմանի կամ եռակողմ):

Քայլ 5 Մոնիթորինգը

Սույն ծրագրի շրջանակում հիմնադրամը և Գործակալը իրականացնում են տրամադրված վարկի նպատակային օգտագործման մոնիթորինգ: Մոնիթորինգը յուրաքանչյուր շահառուի մոտ իրականացվում է ոչ պակաս, քան տարին մեկ անգամ:

Սուբսիդավորման վաղաժամկետ դադարեցման հիմքերը

Սուբսիդավորումը վաղաժամկետ կարող է դադարեցվել հետևյալ հիմքերով՝

- վարկառուի դիմումի համաձայն,
- վարկառուի կողմից վարկի ոչ նպատակային օգտագործման դեպքում,
- վարկառուի հետ կնքված վարկային պայմանագրի լուծման դեպքում,
- Գործակալի կողմից վարկի ոչ ստանդարտ դասակարգելու պահից: Ոչ ստանդարտ՝ դասակարգված վարկը՝ ստանդարտ՝ կամ՝ հսկվող՝ դասակարգվելու դեպքում Սուբսիդավորումը չի վերականգնվում:

